

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայիսի 20-ին, կիրակի օրը, Մայր Տաճարում մեծ հանդիսավորությամբ տոնվեց Հոգեգալստյան տոնը։ Հսկա Տաճարը լիքն էր աղոթողներով և նույնիսկ ժողովրդի մեծամասնությունը մնացել էր Տաճարից դուրս։ Պատարագիչն էր Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսը։ Երեք ամիս Նորին Ս. Օծությունը բացակայում էր Մայր Աթոռից, որովհետև հանձն էր առել մի հոգնաշատ ճանապարհորդություն արտասահմանյան զանազան երկրներում ապրող իր հոտին այցելություն տալու նպատակով։ Ժողովուրդը խուռներամ կերպով այսօր Մայր Տաճարի բակն է լցվել տեսնելու իր սիրելի Հայրապետին և նրանից առնելու իր կարոտը։

Տաճարում քար լռություն է։ Երգում է Մայր Տաճարի քառաձայն երգչախումբը գեղավարությամբ Հոգևոր ճեմարանի երգի և երաժշտության դասախոս և Մայր Տաճարի խմբավար պ. Հրանտ Գևորգյանի։ Պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր», որից առաջ Նորին Վեհափառությունը հայրապետական գավազանը և խաչը վերցնելով դառնում է դեպի ժողովուրդը և սկսում է իր քարոզը ավուր պատշաճի ընթերցանությունն «Եւ լցան ամենեքեան Հոգով Սրբով»։ Բացատրելով Հոգեգալստյան նշանակությունը քրիստոնեության համար և մասնավորելով իր խոսքը մեր ժողովրդի համար Նորին Վեհափառությունն ասաց.

«Այսօր մենք բախտավոր ենք, վասնզի Հոգեգալստյան այս փառավոր տոնը կատարենք այս իսկ կամարներուն տակ, բոլորս մեկտեղ հավաքված։ Այսօր աշխարհի բոլոր եկեղեցիներուն մեջ սուրբ պատարագ կմատուցվի և հայ ժողովուրդի զավակները, ուր ալ գտնվին անոնք, բոլորը կմտածեն մեր մասին, Ս. Էջմիածնի մասին, որովհետև այն Ս. Հոգին, որ իջավ հայ ժողովուրդի վրա, ամենեն առաջ իջավ այստեղ, այս Ս. Սեղանին վրա, և այստեղեն բաշխվեցան անոր շնորհները բոլոր մեր հավատացյալներուն։ Դուք գիտեք, որ հայ ժողովուրդը դժբախտ է եղեր անցյալին մեջ, այդ պատճառով անոր զավակները ստիպված են եղեր բողոքել իրենց տունը, հարազատները, հողը, պաշտելի սրբություններ և փախչիլ հեռու երկիրներ՝ փրկելու համար իրենց կյանքը։ Անոնք կորսնցուցեր են ամեն ինչ։ Պանդուխտի ցուպը իրենց ձեռքերուն, արտասուքը աչքերուն, փախեր են հեռու աշխարհներ և իրենց հետ ոչինչ կրցեր են տանիլ, ո՛չ հարստություն, ո՛չ իշխանություն, բայց անոնք տարեր են իրենց հետ այն Ս. Հոգին, այն լույսն, որ բաշխվեր էր իրենց այս Ս. Տաճարեն՝ սուրբ մկրտությամբ և սուրբ խորհուրդներով։ Անոնք տարեր են իրենց հետ այս հարստությունը և պահեր շարունակ օտարության մեջ։ Այդ է եղեր զանոնք պահողը, փրկողը և այն*

զորությունը, որ պահեր է զանոնք կենդանի իբրև հայ ժողովուրդի զավակներ»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ժողովրդին բացատրեց իր արտասահման կատարած ճանապարհորդությունն ասելով.

«Դուք գիտեք, որ Մենք երեկ վերադարձանք արտասահմանեն: Որպես նորընտիր Կաթողիկոս որոշեր էինք այցելել մեր ժողովուրդին, որ կապրի ի սփյուռս աշխարհի: Ամեն տեղ հաստատեցինք, որ արտասահմանի մեր եղբայրները և քույրերը պահեր են իրենց հայկական հոգին և ազատ գիտակցությունը, հայրենասիրությունը, շնորհիվ իրենց սուրբ հավատքի զորության: Անոնք Մեզ շրջապատեցին խոր զուրգուրանքով, մաքուր զգացումներով: Արտասուքները անոնց աչքերեն կիսոսին հեղեղի նման, մանավանդ երբ կխոսեինք անոնց Ս. էջմիածնի, Լուսավորչի կանթեղի և վերածնած Հայրենիքի ու ձեր մասին: Ձեր անունով Մենք ողջույնի խոսք տարինք անոնց: Մենք տեսնելով այս բոլորը ուրախացանք հոգիով և մխիթարվեցանք: Հաստատեցինք, որ հայը ուր ալ գտնվի, միշտ կապված կմնա Լուսավորչի Աջին, սուրբ հավատքին, մեր Մայր Հողին, մեր Մայր Հայաստանին: Ամեն տեղ, հայրենաբաղձ զգացումներով լեցված, անոնք կերազեն այն օրը, երբ իրենց ալ պիտի վիճակվի Հայրենիքը տեսնել: Կուզեն գալ այստեղ Ս. էջմիածին և մատուցել իրենց աղոթքը: Երբ կրաժեշտիներ անոնցմե, կկանչեին Մեզ սա խոսքերով. «Ապրի՜ Ս. էջմիածինը, ապրի՜ մեր վերածնած Մայր Հայրենիքը»: Այս լսեցինք հազարավոր անգամներ: Այս բոլորը ձեզ հայտնելով վստահ ենք, որ ձեզ ալ կուրախացնենք»:

Վեհափառ Հայրապետի քարոզը, որ տևեց ճիշտ մեկ ժամ, վերջացավ այս մաղթանքներով.

«Սիրելի՛ ժողովուրդ, վերջացնելով Մեր խոսքը այս մեծ տոնին առթիվ, Մեր աղոթքը կառաքենք առ Աստված, որպեսզի Ս. Հոգիի շնորհները առատորեն բաշխվին հայ ժողովուրդին վրա, որպեսզի Տերը ամբողջ և անփոռձ պահե մեր Ս. Եկեղեցին և ժողովուրդը՝ անդորրության ու երջանկության մեջ»:

Սուրբ Պատարագից հետո Թափորի երթը Տաճարից մինչև Վեհարան տևեց 25 րոպե, որովհետև հավատացյալները համբուրում էին Լուսավորչի արժանավոր հաջորդ Սրբազան Հայրապետի օծյալ Աջը: Ժողովրդի բազմության միջից լսվում էին բացագանչություններ՝ «Կեցցե՜ Վեհափառը», «Երկա՜ր, շա՜տ երկար ապրի մեր սիրելի Վեհափառը»:

Մինչև ուշ երեկո Մայր Տաճարի բակը լիքն էր հավատացյալներով: